

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/9

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի 24.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 03.09.2014 թ-ի թիվ 306 որոշման դեմ:

Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի գանգատում բերված փաստարկները.

03.05.2011 թ-ին Ա/Ձ Նաիրա Ստեփանյանը դադարեցրել է ձեռնարկատիրական գործունեությունը և վերադարձրել է պետական գրանցման վկայականը:

08.09.2014 թ-ին ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության Իջևանի տարածքային հարկային տեսչության 03.09.2014 թ-ի թիվ 306 որոշումը, որով պահանջվել է վճարել 221.045 դրամ, որն ըստ թիվ 306 որոշման մեջ նշված պատճառաբանության առաջացել է 2008–2009 թ.թ. ընթացքում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Տվյալ դեպքում 306 որոշման մեջ նշված պատճառաբանությունից հետևում է, որ դրանում նշված խախտումները հայտնաբերված են եղել դեռևս 2009 թ-ից, ընդ որում այդ խախտումներից մեկի հիմքում դրված է եղել 2008 թ-ի ստուգման ակտը:

Նշվածից ելնելով Ա/Ձ Նաիրա Ստեփանյանը խնդրում է վերացնել 03.09.2014 թ-ի թիվ 306 որոշումը՝ կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 03.09.2014 թ-ին ընդունել է թիվ 306 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 02.09.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 221.045 դրամ, որը ենթակա է գանձման: Նշված պարտքն առաջացել է եկամտահարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ոչ հարկային եկամուտների և համակարգի զարգացման ֆոնդի գծով գումարները օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու համար տույժերի հաշվարկման արդյունքում: Մասնավորապես, եկամտահարկի գծով պարտքը կազմում է 2.467 դրամ, որը հաշվարկվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ

հողվածի համաձայն 2009 թ-ի տարեկան հաշվարկը երկու և ավելի ամիս ուշ ներկայացնելու համար:

Եկամտային հարկի գծով պարտքը կազմում է 23.213 դրամ, որն առաջացել է 2013 թ-ի հունվարից սկսած կանխավճարների հաշվարկման արդյունքում:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտքը կազմում է 68.578 դրամ, որն առաջացել է 2009 թ-ի հունվարից սկսած նվազագույն գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար:

Ոչ հարկային եկամուտների գծով պարտքը կազմում է 150.000 դրամ, որն առաջադրվել է 31.03.2008 թ-ին կազմված ստուգման ակտով:

Քննարկվող դեպքում գործում առկա ապացույցները հիմնավորում են Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված պարտավորությունները վերջինիս կողմից սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով դրանք գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ տվյալ դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, նշվեց հետևյալը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ վերոգրյալ պարտավորությունները, դրանք առաջանալու օրվանից, գրանցվել են Ա/Ձ Նաիրա Ստեփանյանի անձնական հաշվի քարտերում: Այսինքն, այդ պարտավորությունները հարկային մարմնին հայտնի են դարձել ոչ թե Որոշումը կայացնելիս, այլ՝ դրանք առաջանալու առաջին իսկ օրվանից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումն իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 03.09.2014 թ-ի թիվ 306 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

